ՆԵՐՔԻՆ ԽՕՅԳԱՆ

Սվարանից դէպի հարաւ, մի փարսախ հեռու, մի հովտում կանգնած է Ներքին Խօյգանը. սա թիւրքաբնակ և հայաբնակ բաւական մի մեծ գիւղ է—130 տնից բաղկացած, որի երկու մասը թուրքեր են։ Առաջ գիւղն ունեցել է բաւականաչափ հայ ժողովուրդ. այժմ շատ քիչ է հայերի թիւը, ընդամենը 30 ընտանիք է 228 շնչով, որից 114-ը արական է և 114-ը իգական։ Նրանք կազմում են Հին-Ջուղայից 1606 թւին Շահ-Աբբասի ձեռքով գաղթողների մի մասը. պարապում են երկրագործութեամբ և մասամբ էլ անասնապահութեամբ։

Այս գիւղն ևս հաստատուած է 311 տարի առաջ. Հարուստ է սառնորակ աղբիւրներով, որոնք բղխում են նրա լանջերից. տները մի յարկանի են և կողք-կողքի կառուցուած, իսկ փողոցները կեղտոտ են և ծուռումուռ։ Հողը մեծ մասամբ ջրովի է, պարարտացնում են երեք տարին մի անգամ աղբով և հերկում արօրով. բերքերից ցանում են ցորեն, գարի, հաճար, կտաւահատ, արևածաղիկ, եօնջա, շալգամ, ոսպ և սիսեռ։ Իսկ հողը խանական է. պատկանում է Հայաթ-Ղուլի, Ջաֆէր-Ղուլի, Ցարաճ և Ջէլալ խաներին։ Վերջինս նստած է գիւղի դիմացը մի ղալայում (բերդ)։ Բնակիչները հողազուրկ են. նրանք վարում, ցանում և մշակում են խաների հողերը և իրենց ստացած արդիւնքի $^{1}/_{3}$ մասը տալիս են նրանց, բացի այդ՝ տարեկան վճարում են խաներին գլխահարկ, անասունների հարկ. ահա նրանց չափը.

*Մարդագլուխ (տղամարդկանց) 3 ղրան**

Չորս ոչխարին $2^{1}/_{2}$ ղ. *Էշին* $2^{1}/_{2}$ ղ. *Կովին* $2^{1}/_{2}$ ղ.

Բայց գիւղացիները միայն այս ծանր հարկերը չէ որ տալիս են. նրանք չորս խաներ ունեն, որոնցից իւրաքանչիւրն իր ցանկութեան համաձայն հարստահարում, կեղեքում է գիւղացիութեան և նրանց տնտեսապէս քայքայում և գնում ոչնչացման ճանապարհի վրայ։ Այսպէս բացի վերոյիշեալ

* Գլխահարկ վերցնում են 18—20 տարեկանից սկսած, իսկ դրանից փոքրերից գլխահարկ չեն վերցնում։